

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԲՈՒԺԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ  
ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2011 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲՈՒԺԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

## Արձանագրություն

Սույն թվականի հոկտեմբերի 22-ին Կոտայքի մարզի Բուժական համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 2011թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածի հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, ազգաբնակչությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Կարեն Գալստյանը մասնավորապես նշելով, որ ժողովի նպատակը համայնքում անցած տաս ամիսներին իրականացված աշխատանքների մասին ներկայացնելն է:

### ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՍ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ֆինանսական գործունեության մասին տեղեկատվություն
2. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:
3. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում
4. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում
5. Համայնքի ղեկավարի գործունեությունն առևտրի և ծառայությունների բնագավառում:

ԶԵԿՈՒՑՈՂ --- ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՍԵՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆՆ և  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ